ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2026 թվականի մայիսի 25-ի թիվ 186 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ «ԲԵՐՔԱՌԱՏԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԱՆՆԱ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 218-րդ հոդվածի 2-րդ մասով, 220-րդ հոդվածի 1-ին մասով, 223-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ կետի «բ» ենթակետով, <<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 20-րդ մասի 5-րդ կետով, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2022 թվականի դեկտեմբերի 29-ի N 1550-Լ որոշմամբ հաստատված 1-ին հավելվածի 20-րդ կետով և հիմք ընդունելով ՀՀ Արագածոտնի մարզի «Բերքառատի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Աննա Վարդանյանի կողմից 2026 թվականի մայիսի 14-ին ներկայացրած բացատրագիրը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. ՀՀ Արագածոտնի մարզի «Բերքառատի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Աննա Վարդանյանին հայտարարել խիստ նկատողություն՝ աշխատանքային կարգապահությունը խախտելու հիմքով:
2. Սույն որոշման մասին պատշաճ կարգով իրազեկել Աննա Վարդանյանին:
3. Որոշումն ուժի մեջ է մտնում Աննա Վարդանյանին պատշաճ կարգով իրազեկելու պահից:

Recoverable Signature

Ստորագրող՝
ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ
3510860535

X

Պարտականությունները կատարող՝ Signed by: GRIGORYAN ARMEN 3510860535

Ա.ԳՐԻԳՈՐՅԱՆ

2026թ. մայիսի 25
ք.Աշտարակ